

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL
OF
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University*

Խմբագրական խորհուրդ

Editorial Board

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,
պրոֆեսոր (նախագահ)
Մարգարիտա Խաչիկյան
բ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Սամվել Կարաբեկյան
բ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Ասատրյան
PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան
բ.գ.թ., դոցենտ
Մարատ Յավրումյան
բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան
պ.գ.թ., դոցենտ
Արայիկ Հարությունյան
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyanyan
(editor in chief)
Prof. Margarita Khachkanyan
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani
(Georgia)
Dr. Samvel Karabekyan
Mushegh Asatryan, PhD
(Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Marat Yavrumyan
Dr. Hayk Kocharyan
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

Գայանե Մկրտումյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈԿՏՐԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

Արշակ Գևորգյան

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

Աբու Ջաիդ Ալի Մուսա

«ՊԱՂԵՍԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....61-75

Լուսինե Մկրտչյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

Գազիկ Համբարյան

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

Վահե Աղասարյան

ԹՈՒՐԹԻՍՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Գևորգյան

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՄԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

Շուշան Կյուրեղյան

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻԲՆ ԱԼ-ՋԱՌԻԶԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

Տաթևիկ Մկրտչյան

ՆԱԿՆՆԱԼ-ԲԱԼՆԱԳ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

Լուսինե Տեր-Հովհաննիսյան

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱԲՄԻԵ».....214-222

Ամայյա Գրիգորյան

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Երիցյան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

Զարուհի Խաչատրյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

Մերվաթ Գոմասա Արդուլլահ Օսման

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

CONTENT

HISTORY

Vardan Ghaplanyan

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-
ABKHAZIAN WAR.....9-22

G.ayane Mkrtumyan

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

Arshak Gevorgyan

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

Abu Zayd Ali Musa

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

Lusine Mkrtchyan

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

Gagik Hambaryan

QATAR CRISIS AND MIDDLE EAST
INTERESTS OF THE USA.....86-95

Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

Vahe Aghasaryan

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND
THE KURDISH FACTOR.....114-120

ISLAMIC STUDIES

Anna Gevorgyan

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME
TENSIONS BETWEEN THE PRESIDENT
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

Shoushan Kyureghyan

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

Tatevik Mkrtchyan

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

Levon Petrosyan

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

LITIRATURE

Davit Hovhannisyan

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR
THE INFORMATION FLOW.....201-213

Lusine Ter-Hovhannisyan

THE "HABSIYAT" GENRE IN
PERSIAN LITERATURE.....214-222

Amalya Grigoryan

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS223-234

LINGUISTICS

Hasmik Yeritsyan

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES235-255

Zaruhi Khachatryan

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM»256-270

Mervat Gomaa Abdullah Osman

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN271-283

**«ԱԴԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ
ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

Դավիթ Հովհաննիսյան
dhovhannisyan@ysu.am

Բանալի քառեր. Աղապտացիոն մեխանիզմներ, մուսուլմանական համայնք, աղաք, Ալ Բալազուրի, ինֆորմացիոն հոսքեր

Այս հոդվածում քննարկվող խնդիրների տեսանկյունից վաղ միջնադարյան արաբական մշակույթը (7-8-րդ դդ.) եզակի և յուրահատուկ է երկու հիմնական պատճառներով: Առաջին կարևոր հանգամանքն այն է, որ մեզ հասել են բանավոր փոխանցման համակարգից գրավորի անցնելու ինֆորմացիոն հեղափոխության իրականացման մանրամասները:

Բանն այն է, որ իսլամի ի հայտ գալու և վերջինիս սրընթաց տարածվելու հետևանքով ումման (մուսուլմանական համայնքը) նախ՝ քանակական առումով հսկայական և շարունակական աճ ունեցավ, ապա՝ մի քանի տասնամյակների ընթացքում դուրս եկավ Արաբական թերակղզու սահմաններից և տարածվեց դեպի աշխարհի բոլոր կողմերը:

Այսպիսով, ումման ոչ միայն կտրվեց իր մշակութային և հասարակական կյանքի օրրանից¹, այլ նաև համալրվեց բոլորովին այլ քաղաքակրթական և մշակութային ժառանգություն ունեցող անդամներով, որոնք, բնականաբար, նոր էին սկսում տիրապետել արաբերենին: Այս հանգամանքները առաջ քաշեցին

¹ Արաբական խալիֆայության քաղաքական և մշակութային կենտրոնները շատ արագ ստեղծվեցին Ասորիքում և Միջագետքում (Դամասկոս, Քուֆա, Բասրա, ապա Բաղդադ):

նախախախտման արաբական լեզվամշակութային նյութի պահպանման խնդիրը: Այդ նյութն անհրաժեշտ էր Ղուրանի տեքստը ճիշտ ընկալելու, իմաստները բացատրելու և հին մշակութային ավանդությանը անձանոթ նոր մուսուլմանների համար Մուրբ գրքի իմաստները պարզաբանող մեկնաբանություններ ստեղծելու համար: Ուստի արդեն 7-րդ դ. վերջին ի հայտ են գալիս այս ամբողջ նյութի կարևորությունը գիտակցող մարդիկ, որոնք նվիրվում են նախախախտման արձակ-բանաստեղծական տեքստի բանահավաքության գործին: Հարկ է նշել, որ այս գործընթացը տեղի է ունենում Մուհամմադ մարգարեի հաղիսների, ինչպես նաև մարգարեի վարքի և ումմայի ձևավորմանը վերաբերող պատումների հավաքմանը զուգահեռ:

Նշված տեքստային զանգվածի հավաքման գործընթացները առավել աշխուժացան, երբ արդեն 8-րդ դարի քսանական թվականներից սկսած, դրանց սուրբեկտները դարձան նոր մուսուլմանների երկրորդ և երրորդ սերունդների ներկայացուցիչները, մասնավորապես՝ պարսկական ծագմամբ: Մշակութային առանձնահատկությունն այն է, որ բանահավաքները արձանագրել են բանահյուսական մշակում չանցած դիսկրետ տեքստերը անմիջականորեն այն անձանցից, որոնց համար դրանք շարունակել են պահպանել իրենց բացարձակ նշանակությունը որպես գիտելիք, ուստի դրանք աղավաղելն անթույլատրելի էր ²: Օգտագործելով Ռ. Բարտի

² Իրավիճակը փոխվում է այն ժամանակ, երբ այս փորձի ակունուլացման ծավալ հանդիսացող տեքստերը կորցնում են իրենց իմացաբանական և գոյաբանական նշանակությունը: Սակայն հաղիսների և խաբարային տեքստերի սակրալացվածությունը օգտագործվում էր որպես կաղապար նոր գիտելիք պարունակող, սակայն հին ձևով ներկայացվող գործիքների ստեղծման համար: Այստեղից էլ հաղիսների, խաբարների, բանաստեղծությունների կեղծիքները արդեն 8-9-րդ դդ.:

ձևակերպումը՝ դրանք կարելի է բնութագրել որպես «հաղորդող տեքստեր», այսինքն՝ նարատիվ³:

Այդ անփոփոխ և նախնական տարբերակին հավատարիմ մնալու սկզբունքային նպատակը թույլ է տալիս մանրամասն վերլուծել ինֆորմացիայի հաղորդման բանավոր համակարգից գրավորին անցնելու գործընթացը, գրավոր մշակույթի ձևավորման, այսինքն՝ նոր քաղաքակրթական համակարգին ադապտացվելու խնդիրների լուծումները:

Երկրորդ կարևոր պատճառն այն է, որ ժամանակային առումով համընկնում են երկու գործընթացներ. ա) նոր մուսուլմանների ակտիվ մասնակցությունը նոր սկզբունքների, նոր «գիտության» հիման վրա կառուցվող պետության և հասարակության ձևավորման պրոցեսներին, բ) ինֆորմացիայի գրավոր հաղորդման համակարգի և գրավոր մշակույթի ստեղծումը:

Այս հանգամանքը հնարավորություն է տալիս վերլուծել, թե իրականում ինչպես էին գործում ադապտացիոն մեխանիզմները և ինչպիսին էր նոր մուսուլմանների (աջամիների) մասնակցությունը այդ աշխատանքում, ավելի մեծ հաշվով՝ թե ինչպես է մշակույթը ադապտացվում քաղաքակրթական համակարգին:

20-րդ դարի արևելագիտության վառ ներկայացուցիչներ Ավգուստ Մյուլլերը և Ադամ Մեցը իրենց հանրահայտ ստեղծագործություններում հոյակապ ներկայացրել են, թե ինչպիսի գարմանք ապրեցին Արաբական թերակղզուց դուրս եկած մուսուլմանները, տեսնելով Սասանյան Իրանի և բյուզանդական գրաված քաղաքները և պալատները և, թե որքան պատրաստ չէին իրենց առջև բացված նոր աշխարհների ընկալմանը: Անսովոր էր ամեն ինչ՝ սկսած քաղաքների՝ իրար կպած ու նեղ փողոցներից,

³ Барт, Р. Избранные работы. Семиотика. Поэтика / Р. Барт. – М.: Прогресс, 1989, է. 283:

պալատների ճոխությունից և իրերի ֆունկցիոնալ կիրառման անհայտությունից վերջացրած կառավարման համակարգով, հարկահավաքմամբ և այլն: Պատահական չէ, որ մուսուլմանները հաճախ նախընտրում էին տեղակայվել բնակավայրերի կողքին հիմնած իրենց ռազմաճամբարներում, որոնցից հետագայում ծնվեցին այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Քուֆան, Բասրան, Կահիրեն, Կայրավանը և այլն: Ժամանակ էր հարկավոր նորին ընտելանալու համար, սակայն խալիֆայության ձևավորման խնդիրները ստիպում էին կրճատել ընտելացման փուլը:

*

*

*

Ներկայացվող վերլուծության խնդիրների տեսանկյունից առավել հետաքրքիր են արաբամուսուլմանական վաղ շրջանի աղբյուրներում պարունակվող խաբարների ⁴ («հաղորդող տեքստեր») տվյալներն այն մասին, թե ինչպես է ումման վերցրել քաղաքակրթական այս կամ այն գործիքը կամ հասկացությունը և ադապտացրել իր արժեքային համակարգին՝ ներմուծելով իր յուրահատուկ մշակութային մոտեցումը: Այս նպատակով անդրադարձել ենք 9-րդ դարի արաբական պատմագրության ամենավառ ներկայացուցիչներից մեկի՝ Ահմադ ալ-Բալազուրիի «Քիրթաբ Ֆուլթուհ ալ-Բուլդան» ⁵ ստեղծագործության մի քանի խաբարների վերլուծությանը ⁶:

⁴ Խաբարների մասին տես՝ Դ. Ա. Оганесян. «Книга поэзии и поэтов». Ереван, 1986, сс. 66-84.

⁵ Հայերեն թարգմանություններն իմ ուսուցիչ պրոֆ. Արամ Տեր-Ղեվոնդյանին են՝ աննշան ճշտումներով: Տես՝ Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, 16: Արաբ Մատենագիրներ: Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները պ.գ.դ., պրոֆ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

⁶ «Ինձ համար ավելի նախընտրելի է ցանկացած պատմամշակութային զաղափար ստուգել համեմատաբար ոչ շատ մեծ տեքստային տարածության վրա, որևէ

Հասկանալի է, որ ադապտացման գործընթացը սկսվում է արդեն Մադինայի ումմայի կայացման ընթացքում: Բալագուրին իր գրքի այս հատվածը սկսում է մարգարեի հադիսով, ինչպես ընդունված էր միջնադարյան արաբական ավանդության մեջ: «Պատմել է Աֆֆան իբն Մուալիմը, վերցնելով Շուբայից, իսկ նա՝ Կաթադայից և սա՝ Անաս իբն Մալիքից, թե երբ Առաքյալը կամեցավ գրել հռոմուների⁷ թագավորին, ասացին նրան, որ (հռոմուները) չեն կարդում նամակը, եթե կնքված չէ: Ասաց՝ վերցրեց մի արծաթե մատանի, և կարծես տեսնում եմ նրա (մատանու՝ Դ. Հ.) սպիտակությունը նրա ձեռքում, և վրան փորագրեց «Մուհամմադ՝ Ալլահի առաքյալ»⁸:

Կնիքի ստեղծման պատճառը Արաբական թերակղզու Հիջազի, այսինքն՝ ավանդականորեն համաշխարհային գործընթացներից մեկուսացված հատվածում ձևավորված մուսուլմանական ումմայի համար արտաքին աշխարհից է գալիս: Այն արտաքին աշխարհից, որը նախախլամական տոհմացեղային պատմամշակութային գիտակցության տեսակետից *afaq-ից*⁹ դուրս էր գտնվում, որը չիմացված է, անհայտ, ուստի քառս է:

Սակայն Մուհամմադ մարգարեի գործունեությանը նախորդող ժամանակաշրջանում հորիզոնի գիծը, պահպանվելով

հատկանշական հատվածի մանրամասն դիտարկմամբ»: Stephen Davies. *Empiricism and History. Theory and History*, Palgrave Macmillan, 2003, p.17.

⁷ Այսինքն՝ Բյուզանդիայի կայսրին:

⁸ Ա.Տեր-Ղևոնդյան, նշված ստեղծ., է. 303:

⁹ Հորիզոնի գիծ, որը սահման էր հանդիսանում *ard-ի* (հասկանալի լեզվով խոսող և ոչ թե բարբառող մարդկանցով բնակեցված հողեր) համար: Այս մասին տես՝ П.А.Грязневич. *Развитие исторического сознания арабов (6-8 вв.)*. – в кн. «Очерки истории арабской культуры 5-15 вв.», с. 78.

Հորիզոնի գծից ներս՝ տիեզերք է, այնտեղ գործում են պատճառ-հետևանքային կապերը, հստակ են չարի և բարու մասին պատկերացումները: Հորիզոնի գծից դուրս քառս է, պատճառահետևանքային կապեր չկան, լավն ու վատը հասկացված և ձևակերպված չեն:

քոչվորական ցեղերի գիտակցության մեջ, շնորհիվ քարավանային առևտրի զարգացման և դրանից բխող բոլոր հետևանքների աստիճանաբար սկսում է ձևափոխվել, ինչի վրա իր ազդեցությունն է ունենում քրիստոնեության և հուդայականության ներթափանցումը: Այս պատմամշակութային գիտակցության փոփոխության հետևանքով Մեքքայի նման բնակավայրերի բնակիչների պատկերացումները թե՛ ժամանակի խորության և թե՛ տարածության ընդլայնման վերաբերյալ կտրուկ զարգացումներ են ապրում:

Մարգարեի քարոզը, ադապտացնելով արտաքին աշխարհի մասին նոր տեղեկությունները ավանդական հասարակության պատմամշակութային գիտակցության համար և հիմնվելով այդ հասարակության ներսում ստեղծված աշխարհընկալման արժեքային սկզբունքների վրա, ձևավորեց մի նոր արժեհամակարգ, որն ընկավ նոր գիտելիքի (ilm) հիմքում:

Եթե Ա մշակույթը (այս դեպքում՝ նորաստեղծ մուսուլմանական մշակույթը) ձգտում է հարաբերակցվել Բ մշակույթի (արևելաքրիստոնեական) ստեղծած քաղաքակրթական համակարգի (գրավոր ավատատիրական քաղաքակրթական համակարգ) հետ, ապա Ա մշակույթը պետք է համակերպվի այդ քաղաքակրթական համակարգի կանոններին: Համակերպվելը չի նշանակում տարալուծվել, ուստի հենց այդ պատճառով նոր քաղաքակրթական համակարգին պատկանող տարրի վրա դրվում է Ա մշակույթի հատկացուցիչ նշանը, այս դեպքում փորագրվում է՝ «Մուհամմադ՝ Ալլահի առաքյալ»:

Այս փորագրության իմաստը չափազանց կարևոր է: Այն տեղեկացնում է հասցեատիրոջը, որ ուղերձի հեղինակը Աստծո առաքելություն է իրականացնում, Բարձրյալի կողմից իրեն տրված

‘ilm-ն է բերել մարդկության համար: Այինքն՝ նա rasul Allah է, այլ ոչ թե malik ¹⁰:

Պատահական չէ նաև այն, որ կնիք ստեղծելու համար արծաթն է օգտագործվել, որը որպես Մադինայում հազվադեպ հանդիպող թանկարժեք նյութ՝ ունենալով սպիտակ գույն («կարծես տեսնում եմ նրա սպիտակությունը») ավանդական գիտակցության համար ուներ սրբության, մաքրության, անմեղության և իմաստության նշանակություն¹¹:

Այս տեղեկությունը ունի մի քանի տարբերակներ, որոնք պայմանավորված են տարբեր իսնադներով¹²: Պատմիչը, կրկնելով հիմնական բովանդակությունը՝ կնիքի ստեղծման պատճառը, մյուս վարկածներում ավելացնում է նաև այն, որ մարգարեն արգելել էր կեղծել կամ կրկնօրինակել այն, և որ արծաթի վրա եթովպական ակնաքար էր գետեղված, որի վրա էլ արվել էր փորագրությունը¹³:

Կնիքի հետ կապված պատմությունը շարունակվում է մի քանի այլ խաբարներով, որոնցից մեկը տեղեկացնում է, որ այդ կնիքը գործածել են Աբու Բաքրը, Օմարը և Օսմանը ¹⁴ : «Երբ վերջինիս ձեռքում էր, ընկավ ջրհորի մեջ: Ջրհորը դատարկվեց, բայց հնարավոր չէրավ գտնել (մատանին): Դա տեղի ունեցավ նրա խալիֆայության շրջանի կեսերին: Նա պատրաստել տվեց մի ուրիշ մատանի ու փորագրել տվեց «Մուհամմադ՝ Ալլահի առաքյալ՝»

¹⁰ «Մալիք» բառը հայերեն ավանդաբար թարգմանվում է որպես «թագավոր», այսինքն թագ ունեցող, թագադրված: Արաբերենում m-l-k արմատի իմաստն է ունենալ, ինչ-որ բանի սեփականատեր հանդիսանալ (օրինակ՝ mulk – ունեցվածք):

¹¹ Տես այս մասին՝ J.Tressider. Symbols and their Meanings, L., 2000, art. Silver.

¹² Բսնադ- հաղորդողների շղթա, որի շնորհիվ հավաստիացվում էր հաղորդված տեղեկության իսկությունը:

¹³ Նույն տեղում, է. 303-304:

¹⁴ Առաջին երեք խալիֆները:

երեք տողի վրա: Կաթադան (հաղորդողը՝ Դ. Հ.) ավելացնում է՝ և մի ծակ»¹⁵:

Այնուհետև Բալագուրին ներկայացնում է գրագրության զարգացման մեկ այլ մանրամասն: «Ինձ պատմել է Մադահինին, վերցնելով Մասլամա իբն Մուհարիբից, թե Զիյադ իբն Աբու Սուֆյանն առաջինն էր արաբներին, ով պահում էր կանոնավոր հաշվեմատյան (դիվան զիմամ) և կնիք, ըստ պարսիկների սովորության»:

Բալագուրիի ստեղծագործության այս խաբարին հետևող հատվածում զետեղված մյուս խաբարները ներկայացնում են կնիքի և թագավորի ստորագրության գործածության մանրամասները Մասանյանների արքունիքում: Այդ խաբարների իսնադները հասնում են Աբդալլահ իբն ալ-Մուկաֆային (մահացել է 756 կամ 759 թթ.), որն էլ հանդիսացել է այն հիմանկան խողովակներից մեկը, որոնց միջոցով սասանյան քաղաքակրթական նորմերը ներմուծվել են իսլամականության կենսագործունեության մեջ:

Հետաքրքիրն այն է, որ Աբդալլահ իբն ալ-Մուկաֆան, աղաբի գրականության շրջանակներում գրված բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակը և հռչակավոր «Կալիլա և Դիմնա» ստեղծագործության արաբական վարկածի թարգմանիչ-հեղինակը, ոչ միայն իր գրվածքներով էր քաղաքակրթում նախկին քոչվորներին, այլ նաև ցույց տալով և պատմելով: Օրինակ, հայտնի է, որ նա խրախճանքներից մեկի ժամանակ սովորեցրել է արաբ էմիրներին օճառով լվացվել:

«Ֆուրուհ ալ-Բուդանում»՝ Իբն ալ-Մուկաֆայի անվան հետ կապված խաբարներում, բացի կնիքի և պետական գրագրության հետ կապված կարևոր տեխնիկական տվյալներից Իբն ալ-

¹⁵ Նույն տեղում:

Մուկաֆան հաղորդում է նաև այն մասին, որ մագաղաթից եկող վատ հոտից ազատվելու համար սասանյան արքունիքում ընդունված էր անուշահոտ օգտագործել: Խաբարներից մեկում Բալազուրին հայտնում է. «Երբ Սալիհ իբն Աբդ ար-Ռահմանը Իրաքի գլխավոր հարկահանը դարձավ, Իբն ալ-Մուկաֆան, որը նրա տեղակալն էր, որոշ գումար բերեց իր հաշվետվությունը գրելով քրքումով ներծծված կաշու վրա, Սալիհը ծիծաղեց և ասաց՝ չեմ ուզում, որ այսուհետև որևէ մեկը նման հաշվետվություն բերի: Այս բանն ասաց, քանի որ գիտեր պարսիկների սովորությունները»¹⁶:

Ինչպես տեսանք, Բալազուրին՝ սկսելով Մուհամադ մարգարեի հաղիսից տեքստի այս երեք էջանոց հատվածում հասնում է մինչև 8-րդ դարի երկրորդ կես: Այս հանգամանքը բացատրելի է, քանի որ քաղաքակրթական համակարգին ադապտացնելու ուղղությամբ նոր մուսուլմանների (դրանց թվում՝ նախևառաջ Իբն ալ-Մուկաֆայի) հիմնական գործունեությունը ծավալվում է 8-րդ դարից սկսած: Բալազուրին, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի այլ արաբ հեղինակներ, բերում է բազմաթիվ նմանատիպ օրինակներ՝ կապված գրագրության զարգացման, արաբական գրերի բարեփոխության, հարկերի հավաքման համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման, պալատական կյանքի և աշխատանքի կազմակերպման, դրամ կտրելու և այլ կարևոր պետական գործառնությունների ներմուծման հետ: Բայց շատ ավելի կարևոր է, որ նոր մուսուլմանները, հիմնվելով իսլամի արժեքային համակարգի վրա, ձևակերպում են նոր բարքեր, սովորեցնում և ցույց են տալիս, թե ինչ է նշանակում «կիրթ մարդ» (adib) և որոնք այդ նոր մարդու որակները:

¹⁶ Նույն տեղում, է. 305:

Բնականաբար, այս նոր ուժի ներթափանցումը ումմայի կյանքի մեջ չէր կարող մրցակցություն չառաջացնել հին և նոր մուսուլմանների միջև: Հներին դեռևս պատկանում էր նոր գիտելիքի մենաշնորհը և իշխանությունը խալիֆայությունում, սակայն նոր մուսուլմանները ձևափոխվող ումմայում անհրաժեշտ դարձած իրենց հմտությունների շնորհիվ այնպիսի ազդեցության էին հասել, որ նույնպես սկսում էին հավակնել իշխանությանը: Այդ ժամանակաշրջանում հասարակության ամենաքննարկվող թեմաներից էր այն, թե որ ժողովուրդն առավելություն ունի մյուսների նկատմամբ: Այս հարցը մնում է արդիական մինչև 9-րդ դ. կեսերը: Այն քննարկել են Բազմաթիվ հեղինակներ, որոնց թվում էին նաև այնպիսի մեծություններ, ինչպես ալ-Ջահիզը և Իբն Բութեյբան:

Այդ թեմային նվիրված բանավեճերը կարող էին տեղի ունենալ թե՛ էմիրի պալատում, թե՛ մզկիթի բակում կամ շուկայում, և թե ուղղակի փողոցում, երբ վիճողները մի հեղինակավոր մարդ էին տեսնում և դիմում էին նրան իրենց վեճի առարկան հանդիսացող հարցի վերաբերյալ կարծիք իմանալու համար:

Արաբների առավելություն ունենալու կամ չունենալու խնդրի վերաբերյալ համաձայնության չեկած մի խումբ մարդիկ, տեսնելով Աբդալլահ իբն ալ-Մուկաֆային, մոտենում են նրան: Ինտրիգն այստեղ այն է, որ Իբն ալ-Մուկաֆան ավանդական պարսկական տոհմի զավակ էր, սասանյան ժառանգության գիտակ և կրող, իսլամն ընդունել էր ճնշման տակ և, հավանաբար, իրականում չէր դավաճանել իր նախնիների դավանանքը (ինչի համար էլ տանջամահ արվեց): Հարցնողները, որոնց թվում շատ էին պարսկական ծագում ունեցող նոր մուսուլմանները, կարծում էին, որ Իբն ալ-Մուկաֆայի պատասխանը կանխատեսելի է: Բայց նա առաջնությունը տվեց արաբներին՝ բացատրելով դա հետևյալ

կերպ. «Արաբները¹⁷ չունեն ոչ առաջնորդ, որ հետևեին, ոչ Մուրբ գիրք, որը նրանց համար ուղեցույց լիներ: Ապրելով վայրի, ամայի անապատում իրենց միայնության մեջ նրանցից յուրաքանչյուրը ստիպված է եղել ինքը մտածել, ինքը գննել, ինքը հասկանալ: Այդպես գիտակցեցին, որ ապրում են երկրի բույսերով, առանձնացրին ամեն մեկի հատկանիշները, խմբավորեցին, ճանաչեցին օգտակարությունը չոր և խոնավ վիճակներում, երբ է ծիլ տալիս և երբ՝ հասունանում, որն է ոչխարին հարկավոր և որը՝ ուխտին: Հետո քննեցին ժամանակը և նրա փոխվելը և բաժանեցին այն գարնան և ամառվա, շոգի և ցրտի: Հետո նկատեցին, որ խմելու ջուրը երկնքից է հորդում, հասկացան, որ անձրևն է և քանի որ արդեն գիտեին եղանակների փոփոխման մասին, կարողացան հաշվարկել, թե տարվա ընթացքում այն երբ է գալիս: Երբ սկսեցին տարածվել երկրով մեկ, երկնային աստղերն ընտրեցին իրենց համար ուղեցույց: Իրար մեջ պայմանավորվեցին այն մասին, թե ինչն է չարից հեռացնում և ինչը մղում ի բարի, ստիպում պախարակել ստորը և ձգտել առաքինության... Նրանց ոչ ոք չի կրթել (addaba), բայց նրանք էությամբ կիրթ են... Այդ է պատճառը, որ ես ասեցի ձեզ որ արաբները ամենաբանական ժողովուրդն են»¹⁸:

Այս երկար մեջբերումը մեզ անհրաժեշտ թվաց, քանի որ Աբդալլահ իբն ալ-Մուկաֆան շատ հասկանալի և տրամաբանական ձևով բացատրում է, թե ինչպես են նախախլամական արաբները ստեղծել գիտելիք և վերջինիս միջոցով մշակելով իրենց աշխարհը, գտնելով պատճառները և դրանցից բխող հետևանքները, այն քառսից վերածել տիեզերքի՝

¹⁷ «Արաբ» եզրույթը այդ ժամանակ նշանակում էր «քոչվոր», «անապատի բնակիչ»: Վերջիններս մեծ հեղինակություն էին վայելում որպես անարատ արաբերենի պահպանողներ, ավանդապատումների և ցեղային դիվանների գիտակներ:

¹⁸ Abu Hayyan at-Tauidi. Kitab al-imta wa-l-mu`anasa. Bayrut, bidun sana, 1, s.267.

ստեղծելով մշակույթ: Այս հատկությունն է, ըստ Իբն ալ-Մուկաֆայի կարծիքով, արաբներին առավելություն տալիս մյուսների նկատմամբ:

Սակայն այդ մյուսները՝ հույները, հռոմեացիները, հնդիկները, պարսիկները, իրենց հերթին, տվել են արաբներին այն հմտությունները, նորմերը և ինստիտուտները, որոնք նրանց «իրենց միայնության մեջ» հարկավոր չէին: Աստղերով և այլ անապատային նշաններով գիտեին ճանապարհ գտնել, երբ հարկավոր եղավ, սովորեցին կնիքից օգտվել, դրամ կտրել, հարկ հավաքել: Այսպես նոր արժեքային համակարգը մշակույթի միջոցով ադապտացվեց նոր քաղաքակրթական համակարգին:

«АДАБ» КАК АДАПТАЦИОННЫЙ ИНСТРУМЕНТ ДЛЯ ИНФОРМАЦИОННЫХ ПОТОКОВ

Резюме

Давит Ованнисян
dhovhannisyan@ysu.am

Ключевые слова: *адаптационные механизмы, мусульманская община, адаб, Аль-Балазури, хабар, информационные потоки*

В результате зарождения и стремительного распространения ислама мусульманская община пополнилась членами с совершенно иным цивилизационным и культурным наследием. Новые мусульмане, основываясь на религиозной системе ценностей, сформировали новые нравы, а также показали, что значит образованный человек (адиб) и какие у него должны быть качества.

В статье анализируется процесс перехода от системы устной передачи информации к письменной, особое место отведено формированию культуры письма, то есть вопросам адаптации к новой цивилизационной системе, что раскрывается на примере

адаба. Более детально рассматривается то, каким образом мусульманская община адаптировала к своей системе ценностей тот или иной инструмент или понятие, используя при этом свой особый культурный подход.

“ADAB” AS THE ADAPTATION INSTRUMENT FOR THE INFORMATION FLOW

Summary

Davit Hovhannisyan
dhovhannisyan@ysu.am

Keywords: *adaptation mechanisms, Muslim community, adab, Al-Baladhuri, khabar, information flow*

As a result of Islamic genesis and its rapid spread Muslim community was enriched with new members who possessed absolutely new civilizational and cultural heritage. With the help of the value system of Islam the newly converted Muslims generated fresh morals and gave the definition of a cultured person and what features he needs to possess.

In this paper the author analyses the transitional process of transferring from the oral tradition of the information to the written one. A key role belongs to the formation of the culture of writing, the adaptation process of the new civilizational system all by means of using the example of adab. The process of adaptation of mechanisms and concepts to a value system in Islam is studied in detail by using the unique cultural attitude of Islam.